

**ԱՇՈՏ ԱՂԱՍՈՒ ԹԱՎԱՐԵԱՎ, տ.գ.դ., պրոֆեսոր,**

**ՀՊԾ տնտեսամաքեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ,**

**ՀՀ ԳԱԱ Ս.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող**

## **ԳՆԱՅԻ ԵՎ ԱՉԳԱՅԻՆ ԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈԽԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Տնտեսական աճի և բյուջեի կատարման համար չափազանց կարևոր է համակարգային մոտեցումը, տնտեսական ցուցանիշների փոխկապվածությունների հստակ գնահատումը: Սակայն առկա են բազմաթիվ օրինակներ, երբ այդ փոխկապվածությունները հաշվի չեն առնվում: Գների կայունության կարևորագույն սկզբունքի կատարումը հաճախ վեր է ածվում չափազանց կոշտ, ոչ ձկուն դրամավարկային քաղաքականության: Մինչև հիմա բավարար ուշադրություն չի դարձվում հակառակ կապի վրա՝ թե ինչպէս և է գների կայունությունը կոնկրետ անդրադառնում տնտեսության աճի, արտահանման մեծացման և բյուջեի կատարման վրա:

1967 թվականին Գերմանիայում ընդունվեց օրենք տնտեսության կայունության և աճին նպաստելու մասին, որտեղ սուբյեկտիվ մոտեցումից խուսափելու համար ձևակերպված են տնտեսական քաղաքականության հիմնական սկզբունքները, այսպես կոչված, «մոգական քառակուսին»<sup>1</sup>: Դրանք այն սկզբունքներն են, որոնք պահանջվում է առաջին հերթին հաշվի առնել բյուջեի, պետական ծրագրերի նախապատրաստման ժամանակ: Այդ սկզբունքները հետևյալն են կայուն տնտեսական աճ, հավասարակշռված արտաքին առևտուր, գրադարակության բարձր մակարդակ, գների կայունություն: Այդ սկզբունքները դիտվում են որպես միասնական համակարգ: Մի սկզբունքի առանձնացման փորձը, առանց հաշվի առնելու նրա փոխկապվածությունը այլ առանցքային սկզբունքների հետ, չի տալիս դրական արդյունք, հատկապես երկարաժամկետ ժամանակաշրջանում:

Հետազոտենք, օրինակ, գների կայունության սկզբունքը: Իհարկե, դա չափազանց կարևոր սկզբունք է, դա անվիճելի է: Սակայն դա ինչպէս ապահովել տնտեսական համակարգից դուրս, թե օպտիմալ ձևով համաձայնեցնելով առանցքային տնտեսական ցուցանիշների: Չափազանց կարևոր է գնահատել գնաճի փոխազդեցությունը տնտեսության այլ առանցքային ցուցանիշների հետ, ասենք, եթե առևտրային հաշվեկշիռը եապես խախտված է, ներմուծումը զգալի գերազանցում է արտահանումը դրամավարկային քաղաքականության գործիքները լիարժեք չեն կարող աշխատել: Եթե ներմուծումը եապես գերազանցում է արտահանումը կենտրոնական բանկը չի կարող արդյունավետ կարգավորել գնաճը, քանզի այն փաստացի մեծագույն չափով կախված է ներմուծվող ապրանքների գնազոյացումից: Մինչև լուծված չէ վճարային և առևտրային հաշվեկշիռ խախտման լրջազույն հիմնախնդիրը, գների աճը հիմնականում կախված կլինի ներմուծվող գների տատանումներից, որոնց ազդեցությունը ուժեղանում է կախված տնտեսության մենաշնորհայնության մակարդակից:

Պետք չէ ամեն գնով ձգտել պահել գնաճը նվազագույն սահմաններում, հաշվի չառնելով նրա փոխկապվածությունը փոխարժեքի, վերաֆինանսավորման տոկոսադրույթի, փողայնացման մակարդակի, առևտրային և վճարային հաշվեկշիռի, ՀՆԱ-ի հետ: Արդյունքում փաստացի գրաբերելով այդ փոխկապվածությունները և ձեռք բերելով բարձր հավանականություն գների սեղոնային և կառուցվածքային աճի: Տեսն այստեղ կ ստեղծվում է ակնհայտ ոչ բարենպաստ պատճառահետևանքային շղթան: Որպեսզի հակազդի ներմուծվող ապրանքների գների աճին, առաջին հայացքից կարծես թե աննպատակահարմաք է ազգային արժույթի փոխարժեքի նվազումը, նույնիսկ սահուն ձևով: Սակայն դա իհարկե չի նպաստում արտահանմանը, արտադրության աճին ուղղված ներքին պահանջարկի բավարարմանը և առևտրային հաշվեկշիռի իրավիճակի

<sup>1</sup> Facts about Germany, Chief editor: Dr. Arno Kappler, German Federal Press and Information Bureau, 2000, ISBN 3-7973-0752-7, p. 184.

լավարկմանը: Վերջ ի վերջո գնաճի կախվածությունը ներմուծվող ապրանքների գների ազդակից մնում է առանցքային գործոն, և գնաճի անկանխատեսելիության աստիճանը չի նվազում:

Ակնհայտ է ընտրությունը երկու տարբերակների միջև կամ առաջին հայացքից նվազագույն գների աճ ուղղակի կախված արտահանումից և ունեցող սեզոնային և կառուցվածքային տատանումների մեծ հավանականություն ու շփոխկապակցված այլ առանցքային ցուցանիշների հետ, կամ գնաճ նվազագույն տատանումներով, փոխկապակցված այլ առանցքային ցուցանիշների հետ: Արդյունքում երկարաժամկետ առումով կապահովի չգերազանցող որոշակի ընդունելի սահմանը կայուն գնաճ:

Դրամավարկային քաղաքականությունը ուղղակի անհրաժեշտ է իրականացնել համակարգված: Ցածր իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը, այսինքն վերաֆինանսավորման տոկոսադրույք հանած գնաճ կնպաստի դրամավարդակային քաղաքականության ճշգրտմանը, այդ թվում փողայնացման մակարդակի փուլային առումով մեծացմանը մոտ զարգացող երկրների օպտիմալ մակարդակին: Այս դեպքում հիմնախնդիրը նրանում չէ որ բոլոր միջոցներով ապահովել հնարավորինս նվազագույն գնաճ, այլ նրանում է, որ ունենալ իրականությանը համապատասխանող գնաճ, որը առավելագույնս նպաստավոր է տնտեսության, արտահանման աճին և դրա հետ մեկտեղ դրական է անդրադառնում փողայնացման մակարդակի վրա՝ մոտեցնելով նրան իր զգայունության շեմին<sup>1</sup>: Դա թույլ կտա որոշակի փուլերով անցում կատարել ավելի ցածր և, ընդգծեմ, կայուն գնաճի: Միայն այն ուազմավարությունը, որը հաշվի է առնում իրական փոխկապակցման գործությունները, նպաստավոր է տնտեսության դրական փոփոխությունների համար:

Նշենք, որ փողայնացման մակարդակի աճը ինքնանպատակ չէ, և այս դեպքում նույնպես պետք է հաշվի առնել նրա փոխկապակցման գործությունները, և դա կարող է լինել որպես հետևանք տնտեսական աճի ու արտահանման համար նպաստավոր կայուն գնաճի դեպքում:

Սոլորություն է կարծել, որ բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքը միշտ զապում է գնաճը, իսկ ցածրը հակառակը: Բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույքի դեպքում, հատկապես շատ ցածր փողայնացման մակարդակի պայմաններում ձևավորվում է հետևյալ պատճառահետևանքային կապը՝ բարձր վերաֆինանսավորման տոկոսադրույք - ավելի բարձր բանկային տոկոսադրույքներ - սեփական միջոցների սուր պակասուրդի պայմաններում ծախսերի աճ - ծախսերի գնաճ, ինչը ակնհայտ նպաստավոր չէ ներքին սպառումը ապահովող արտադրության և արտահանման համար:

Հատկապես տնտեսական աճի տեսակի մեծացման ծայրահետ անհրաժեշտության դեպքում է նպատակահարմար իջեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Հաշվի առնելով գնաճը, պետք է գնահատել թե ինչպես է վերաֆինանսավորման տոկոսադրույքը անդրադառնում ՀՆԱ-ի, նրա կառուցվածքի, վճարային և առևտրային հաշվեկշռի վրա: Գրեթե անհնար է արդիականացնել արտադրությունը, եթե տնտեսավարող սուրբեկտների եկամուտները էապես իջնում են, գնաճի և փոխարժեքի տատանումները բարձր են, դրա հետ մեկտեղ բանկային տոկոսադրույքները փաստացի դարձնում են վարկերը անհասանելի: Վերաֆինանսավորման տոկոսադրույքը ունի իր միջակայքը, որի վերին սահմանի համար առանցքային նշանակություն ունի շահութաբերությունը հանած բանկային մարժանայն ոլորտներում, որոնք ապահովում են զիտատեխնիկական առաջընթացը: Այդ սահմանի գերազանցումը, հատկապես ցածր փողայնացման մակարդակի պայմաններում, արդարացի է միայն կրիտիկական վիճակներում, ընդ որում նվազագույն կարճաժամկետում, քանզի հակառակ դեպքում կարելի է հասցնել մեծ վնաս երկրի գիտատեխնիկական ներուժին:

Ընդհանուր առմամբ տրանսֆորմացվող տնտեսություն ունեցող երկրի համար օպտիմալ դրամավարկային քաղաքականությունը, որը փոխկապակցված է հարկաբյուջետային քաղաքականության հետ, կարելի է ներկայացնել հետևյալ ձևով: Անցում կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի և գնաճի տարբերության ոչ ավել, քան երկուտոկոսային կետի, որը առաջին հերթին հնարավորինս համապատասխանում է ՀՆԱ-ին և արտահանման, հատկապես պատրաստի արտադրանքի արտահանման աճին և համապատասխանում է ազգային

<sup>1</sup> Ашот Тавадян, Пороги чувствительности постсоветской экономики // Мир перемен. 2013. № 2.

արժույթի փոխարժեքի դինամիկայի փոփոխությանը գնաճին ու որպես հետևանք նպաստավոր է նաև արտահանման մեծացմանը: Այդ պայմաններում անհրաժեշտ է ապահովել գնաճի մակարդակը ոչ ավել, քան 5,5%-ը: Ինչը, ի դեպ, պետական բյուջեի մասին օրենքի պահանջ է: Եթե վերը նշված պահանջների դեպքում չի ապահովվում գնաճը ոչ ավել քան 5,5%, ապա առանցքային տնտեսական ցուցանիշների օպտիմալ արժեքներին հասնելու տեմպը նպաստակահարմար է ճշգրտել: Ընդգծենք այս կարևորագույն առանցքային հիմնախնդիրը պահանջում է կոմպլեքս լուծում:

Հայաստանի զարգացման համար անհրաժեշտ է վերաֆինանսավորման տոկոսադրույթի ն գնաճի տարբերության էական կրծատում, տարբերությունը ոչ ավելի, քան 2-3 տոկոսային կետ: Զարգացած կամ զարգացման էական աճի տեմպ ունեցող ոչ մի երկիր չունի նշված ցուցանիշների ավելի մեծ տարբերություն: Իրական վերաֆինանսավորման տոկոսադրույթն այդ երկրներում չի գերազանցում 2- 3%-ը: Բարձր իրական տոկոսադրույթը շահույթ հետապնդող կազմակերպության վարքագիծ է, իսկ երկիրը չի ունենում զարգացման բարձր տեմպ, եթե վճարում է ավելի մեծ զին նվազագույն գնաճի համար: Ինչպես ցույց է տալիս փորձը, այլապես ստիպված են լինում ունենալ ներդրումների, արտահանման, միջազգային պահուստների տեսանկյունից զարգացման համար ոչ նպաստավոր իրավիճակ:

Հակառակ դեպքում կրնկնենք նոյն ծուղակը՝ գնաճը նվազագույն ցածր մակարդակին պահելու համար անհրաժեշտ կլինի ունենալ չարդարացված բարձր իրական վերաֆինանսավորման տոկոսադրույթ, փոխարժեքը պահել հնարավորինս անփոփոխ վճարելով դրա համար միջազգային պահուստների նվազմամբ, վճարային և առևտրային հաշվեկշռի վատթարացմամբ: Իսկ իրական փոխարժեքն այն է, որի դեպքում այդ բացասական գործոնները տեղի չեն ունենում: Իշեցնելով իրական վերաֆինանսավորման տոկոսադրույթը և էապես մեծացնելով արտահանումը մենք կարող ենք հետագայում ապահովել փոխարժեքի ոչ էական տատանում ու ոչ բարձր գնաճ:

Իհարկե, այժմ վերաֆինանսավորման տոկոսադրույթի և գնաճի տարբերության նվազման, ինչպես նաև պահուստավորման նորմի իշեցման քաղաքականությունը կարող է բերել դրամի փոխարժեքի որոշակի արժեզրկման և, համապատասխանաբար, ներմուծվող ապրանքների գնաճի, բայց միայն այս ձևով մենք կարող ենք դրամավարկային քաղաքականությամբ դրական ազդեցություն ունենալ վճարային և առևտրային հաշվեկշռի, տնտեսության զարգացման վրա: Պեսք է նաև հաշվի առնել, որ զնաճը էապես կախված է ներմուծվող ապրանքների միջազգային շուկայում ձևավորվող գներից և ոչ միայն վարվող դրամավարկային քաղաքականությունից:

Ուղեցույցն այստեղ հետևյալն է՝ անհրաժեշտ է վերաֆինանսավորման տոկոսադրույթը ու պահուստավորման նորմը նվազեցնել այնպես, որ դրամավարկային քաղաքականությունը, նպաստելով տնտեսության զարգացմանը, դրա հետ մեկտեղ թույլ չտա, որ զնաճը գերազանցի ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով սահմանված 5.5%-ը: Սա է դրամավարկային քաղաքականության իրականացման առանցքային արվեստը:

Հայաստանը, դառնալով ԵԱՏՄ անդամ, համաձայն ԵԱՏՄ պայմանագրի պարտավոր է կատարել նաև որոշակի պայմաններ դրամավարկային քաղաքականության վերաբերյալ, որոնք սահմանված են ԵԱՏՄ պայմանագրի 63 և 64 հոդվածներում<sup>1</sup>: Եվրասիական տնտեսական միության պայմանագրում որոշ բաժիններ ունեն առանցքային նշանակություն, դա է ցույց տալիս նաև Եվրամիության Մասսարիի մասին պայմանագրով սահմանված առանքային ցուցանիշների վերաբերյալ պայմանները:

Մասնավորապես ԵԱՏՄ պայմանագրի «Մակրոտնտեսական քաղաքականություն» XIII և «Արժութային քաղաքականություն» XIV բաժինները, ինչպես նաև «Համաձայնեցված արժութային քաղաքականության վարման վերաբերյալ ուղղված միջոցների մասին» հավելված 15-ը ունեն առանցքային նշանակություն: Տվյալ բաժինների կոնկրետացումը չափազանց կարևոր է և առաջնային խնդիր է: Նշենք, որ 13-րդ բաժնի 63 հոդվածում «Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք որոշում են տնտեսական զարգացումը» նշված է, որ զնաճի մակարդակը

<sup>1</sup> "Договор о Евразийском экономическом союзе".

Հի կարող գերազանցել ավելի քան 5 տոկոսային կետով գնաճի մակարդակը այն ԵԱՏՄ երկրում, որտեղ գնաճի ցուցանիշը նվազագույնն է: Սակայն տվյալ պայմանը չի կատարվում (աղյուսակ 1):

#### Աղյուսակ 1

##### ԵԱՏՄ երկրների գնաճը, ԿԲ տոկոսադրույքը, փոխարժեքի փոփոխությունը ԱՄՆ դոլարի նկատմամբ

Երկիր	Տարի	Գնաճ	ԿԲ տոկոսադրույք	Փոխարժեքի փոփոխությունը ԱՄՆ դոլարի նկատմամբ
Ռուսաստան	2014	11.4 %	10.5 %	- 95.6 %
	2015	12.9 %	11.0 %	- 9.1 %
	2016	5.4 %	10.0 %	+ 22.5 %
Ղազախստան	2014	7.4 %	5.5 %	- 18.6 %
	2015	13.6 %	5.5 %	- 96.9 %
	2016	16 %	12.0 %	+ 7.2 %
Բելառուս	2014	17.1 %	20 %	- 62.3 %
	2015	11.4 %	25 %	- 33.2 %
	2016	10.6 %	18 %	+ 6.7 %
Հայաստան	2014	3.0 %	8.50 %	- 16.5 %
	2015	-0.1 %	8.75 %	- 2.7 %
	2016	-1.1 %	6.25 %	- 0.0 %
Ղրղզստան	2014	10.5 %	10.5 %	- 17.8 %
	2015	3.4 %	10.0 %	- 26.9 %
	2016	-0.5 %	5.0 %	+ 8.9 %

ԵԱՏՄ պայմանագրի առանցքային հոդվածների հստակ կատարման դեպքում ակնհայտ նպատակահարմար է ԵԱՏՄ երկրներում հաշվարկները, հատկապես ռազմավարական ապրանքների մասով, կատարել ազգային արժույթով և հրաժարվել այդ հաշվարկներում դոլարից, ինչը հնարավորություն կտա ավելի արդյունավետ իրականացնել փոխիհաշվարկները և կրծատել դրանցում դրարիզացիայի մակարդակը: Տվյալ առաջարկը ուղղակի հետևում է ԵԱՏՄ պայմանագրից: Այդ տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն է ստանում 64-րդ հոդվածը, որտեղ ներկայացված են ԵԱՏՄ երկրների համաձայնեցված արժութային քաղաքականության նպատակները և խնդիրները: Ինտեգրացիայի էֆեկտները մեծացնելու տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շահերից է բխում համագործակցության զարգացումը արժույթաֆինանսական ասպարեզում, ազգային արժույթի դերի բարձրացումը առևտրային ու ներդրումային գործընթացներում և, իհարկե, ազգային արժույթների փոխարկելիության գործում: Դրա համար համաձայն ԵԱՏՄ պայմանագրի անդամ երկրները պետք է իրականացնեն համաձայնեցված արժութային քաղաքականություն: Տվյալ հոդվածի հավելվածում ուղղակի նշված է ազգային արժույթների փոխարժեքի կոռորդինացման անհրաժեշտության մասին, ինչը կապահովի ԵԱՏՄ-ում փոխիհաշվարկների իրականացումը ազգային արժույթով:

Անհրաժեշտ է նշել հետևյալ գործոնը, եթե գործնականում չեն իրականացվում գործարքներ ազգային արժույթով, գոնե ռազմավարական ապրանքների գծով, ապա ԵԱՏՄ երկրների կենտրոնական բանկերի մոտ չի լինի հստակ ազդակ ԵԱՏՄ պայմանագրի պահանջները կատարելու համար, նաև համապատասխան նորմատիվների և փաստաթղթերի համաձայնեցման ու ընդունման համար: Նշենք, որ փոխիհաշվարկները ազգային արժույթով ուղղակի նպաստում են լողացող փոխարժեքի քաղաքականության համաձայնեցված և ավելի ուշինալ իրականացմանը: ԵԱՏՄ բոլոր երկրների համար նպատակահարմար է իշեցնել դրարիզացիայի մակարդակը: Նվազում է ոչ միայն պահանջարկը դոլարի նկատմամբ, այլ նաև ծախսերը փաստացի կրկնակի կոնվերտացիայի վրա: Գաղի համար Հայաստանը վճարում է Գազպրոմ ռուսական

կազմակերպությանը տարեկան մոտ 270 մլն. դոլար, իսկ գազը վաճառքում է Հայաստանում դրամով՝ 2016թ. ընթացքում Ռուսաստանից Հայաստան ստացված տրանսֆերները կազմել են մոտ 960 մլն դոլար, որը ընդհանուր տրանսֆերների՝ 1.5 մլրդի 60%-ն է<sup>1</sup>: Տրանսֆերները փոխանցվում են հիմնականում ռուսական ռուբլով: Տվյալ փոխաշվարկների մեխանիզմի դեպքում գումարի հիմնական մասը բանկերի միջոցով ուղարկվում է Ռուսաստան և Ռուսաստանի բորսաներում կոնվերտացվում է ԱՄՆ դոլարով: Այս դեպքում գազի համար վճարելու համար փաստացի անհրաժեշտ է լինում երկու անգամ կոնվերտացնել արժույթը, կատարելով համապատասխան ծախսեր: Ռուսաստանի համար անցումը փոխաշվարկներում ռուսական ռուբլու ռազմավարական ապրանքների գծով, մասնավորապես էներգակիրների մասով, համապատասխան ձևով կնվազեցնի ռուսական բորսաներում պահանջարկը դոլարի նկատմամբ և, իհարկե, էապես կմեծացնի պահանջարկը ռուսական ռուբլու նկատմամբ ԵԱՏՄ երկրներում: Փոխաշվարկները ազգային արժույթով ոչ միայն նպաստավոր են ազգային արժույթների կայունության համար, այլ նաև համապատասխանում է ԵԱՏՄ պայմանագրի պահանջների կատարմանը: Հետագայում դա հիմք է ստեղծում անցում կատարել ազգային արժույթով փոխաշվարկներին ռազմավարական ապրանքներից ապրանքաշրջանառության ամբողջ դաշտին:

Դա անհրաժեշտ է առաջին հերթին տնտեսությունը ապահովագրելու համար դոլարի նկատմամբ ազգային արժույթի տատանումից, նվազեցնել դոլարիզացիայի մակարդակը ԵԱՏՄ երկրներում, ինչպես նաև ծախսերը կոնվերտացիայի վրա: Որպեսզի որևէ ԵԱՏՄ անդամ երկիր չստանա առավելություն ազգային արժույթների տարբեր մակարդակի տատանումներից, ուղղակի անհրաժեշտ է կատարել ԵԱՏՄ պայմանագրի պայմանները արժութային քաղաքականության վերաբերյալ և առաջին հերթին հստակեցնել և կոնկրետացնել դրանք: ԵԱՏՄ երկրները այդ քայլով կնպաստեն նաև պայմանագրի չորրորդ «Միության նպատակները» հոդվածում սահմանված ԵԱՏՄ նպատակների կատարմանը ազգային տնտեսությունների արդիականացմանը, կոռպերացմանը և մրցունակության բարձրացմանը: Ակնհայտ է, որ առանց համաձայնեցված դրամավարկային և հատկապես արժութային քաղաքականության կոռորդինացմանը, սահմանված նպատակներին հասնել հնարավոր չել:

Անհրաժեշտ է նշել, որ տվյալ քայլը նպաստում է նաև ԵԱՏՄ երկրների տնտեսական անվտանգության ամրացմանը: ԵԱՏՄ երկրների ազգային արժույթների համաձայնեցման համար նրանց փոխարժեքը փոխարկելի արժույթների նկատմամբ նպատակահարմար է, որ սահուն, քայլ առ քայլ նվազի և դա պետք է կատարվի համաձայնեցված: Զակառակ դեպքում, եթե փոխարժեքը մնում է փաստացի անփոփոխ, հատկապես էապես ավելի բարձր գնաճի դեպքում, դա նշանակում է, որ երկրում խթանվում է ներմուծումը, փաստացի նրան ցուցաբերվում է աջակցություն: Նույն ժամանակ տրամաբանական է նպաստել հակառակ գործընթացին, քանզի ազգային արժույթի գերազնահատված փոխարժեքը փաստացի կարող է արհեստականորեն նվազեցնել երկրի մրցունակությունը, բացասական ազդելով վճարային ու առևտրային հաշվեկշռի և բյուջեի կատարման վրա:

Գնաճին համապատասխանող փոխարժեքի սահուն նվազումը նպաստավոր է տնտեսության հատկապես արտահանման համար: Իհարկե ԵԱՏՄ երկրներում դա պետք է տեղի ունենա սահուն և համաձայնեցված, քանզի կամայական տատանումները վնասում են տնտեսությանը: Եթե տրանսֆերմացվող երկրում նպաստավոր գնաճը 4-5% է, իսկ ԱՄՆ-ում և Եվրամիությունում գնաճը կազմում է մոտ 1%, ապա աննպատակահարմար է ազգային արժույթի կարծր կայունությունը: Անհրաժեշտ է նպաստել փոխարժեքի ձևավորմանը 3-4 տոկոսային կետով ավելի ցածր, հաշվի առնելով այն ապրանքների գների փոփոխությունը, որոնք ներկայացված են առևտրային հաշվեկշռում: Գերազնահատված ազգային արժույթը տրանսֆորմացվող երկրում հիմք է ստեղծում փոխարժեքի կտրուկ փոփոխման համար, հատկապես գնաճամային պայմաններում:

Տվյալ դեպքում ազգային արժույթի փոխարժեքի «սեղմված զապանակը» կարող է կտրուկ բացվել: Բացի դրանից, եթե տվյալ փոխարժեքի դեպքում էապես նվազում են երկրի միջազգային պահուստները, ապա դա առանցքային ազդակ է նրա մասին, որ ազգային արժույթը գերազնա-

<sup>1</sup> <http://www.armbanks.am/en/2017/02/09/105652/>

հատված է: Փոխարժեքի և միջազգային պահուստների կտրուկ նվազումը վտանգ է ներկայացնում երկրի տնտեսական անվտանգության համար:

Հայաստանում փողայնացման մակարդակը չի գերազանցում 40%-ը, Ռուսաստանում գրնվում է 50%-ի շրջանակներում, իսկ ԵԱՏՄ այլ երկրներում ավելի ցածր է: Այն դեպքում, եթե որ Եվրամիության զարգացած երկրներում փողայնացման մակարդակը 100%-ի շրջանակներում է, իսկ Չինաստանում և Ասիայի արագ զարգացող երկրներում փողայնացման մակարդակը եապես բարձր է 100%-ից:

Ցածր փողայնացման մակարդակի դեպքում պարբերաբար առաջանում են դժվարություններ տնտեսության կայուն աճի և նրա դիվերսիֆիկացիայի համար, ինչպես նաև կարող են առաջանալ հիմնախնդիրներ ազգային արժույթով փոխհաշվարկների դեպքում: Նշենք, որ փողայնացման մակարդակի աճի համար նպաստավոր է ԵԱՏՄ երկրների ազգային արժույթների փոխարկելիությունը և փոխհաշվարկներում անցումը ազգային արժույթներին:

ԵԱՏՄ երկրներում դրամավարկային քաղաքականության համաձայնեցման համար անհրաժեշտ է, հաշվի առնելով գնաճի փոխկապվածությունները դրամավարկային քաղաքականության այլ առանցքային ցուցանիշների հետ, հասնել նրան, որ ԵԱՏՄ երկրներում գնաճը չգերազանցի 4-5%-ը: Այդ պարագայում ազգային արժույթի փոխարժեքի նվազումը ԱՄՆ դրամի և Եվրոյի նկատմամբ պետք է համապատասխանի գնաճին, դրա հետ մեկտեղ պետք է ունենալ համաձայնեցված վերաֆինանսավորման տոկոսադրույթը և որպես հետևանք փողայնացման մակարդակի համապատասխանեցում երկրի զարգացման տեմպին: Չափազանց կարևոր է նաև պայմանագրային պարտավորությունների հստակ կատարումը, հատկապես գնաճի և արժույթային քաղաքականության մասով: Եթե հնարավոր չէ օրյեկտիվ պատճառներից ելնելով այս կամ այն հոդվածը կատարել, ապա դա անհրաժեշտ է ճշգրտել:

ՀՀ տնտեսական քաղաքականության առանցքային կետերի իրականացման համար, որոնք վճռական նշանակություն ունեն ՀՀ տնտեսության կայուն աճի համար, պետք է իրականացնել համակարգված և համաձայնեցված քայլեր: Հատկապես անհրաժեշտ է համաձայնեցված հարկաբյուջետային և դրամավարկային, մասնավորապես արժութային քաղաքականության իրականացում: Միայն համաձայնեցված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունն է նպաստում ՀՀ տնտեսության զարգացման սցենարի լավարկմանը: Այստեղ մեծ դեր ունի նաև տվյալ քաղաքականությունների կոռորդինացումը սոցիալ քաղաքականության հետ և, իհարկե, ՀՀ տնտեսական քաղաքականության կոռորդինացումը ԵԱՏՄ այլ երկրների հետ, համաձայն ԵԱՏՄ պայմանագրի:

## ԳՆԱՅԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՓՈԽԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՇՈՏ ԱՂԱՍԻ ԹԱՎԱԴՅԱՆ, տ.գ.դ., պրոֆեսոր,

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ,

ՀՀ ԳԱԱ Մ.Քորանյանի անվան տնտեսազիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

### Դամառութագիր

Հոդվածում նշվում է դրամավարկային քաղաքականության առանցքային ցուցանիշների առաջնահերթ դերը: Գնահատվում է ազգային արժույթի փոխարժեքի և գնաճի փոխապահությունը, վերաֆինանսավորման տոկոսադրույթի, պահուստավորման նորմայի, փողայնացման մակարդակի, վճարային և առևտության հաշվեկշռի հետ: Երկրի տնտեսության զարգացման համար լավագույն սցենարի ձևավորման համար անհրաժեշտ է դրամավարկային ցուցանիշների վերաբերյալ վարել համակարգված դրամավարկային քաղաքականություն:

**Բանալի բառեր.** գնաճ, ազգային արժույթի փոխարժեք, վերաֆինանսավորման տոկոսադրույթ, փողայնացման մակարդակ, առևտության հաշվեկշռ:

## ВЗАИМОДЕЙСТВИЕ ИНФЛЯЦИИ И КУРСА НАЦИОНАЛЬНОЙ ВАЛЮТЫ В РА

**АШОТ АГАСИЕВИЧ ТАВАДЯН,** д.э.н., профессор,

заведующий кафедрой экономико-математических методов АГЭУ,

ведущий научный сотрудник Института экономики имени М.Котяниана НАН РА

### Аннотация

В статье отмечается ведущая роль ключевых индикаторов денежно-кредитной политики. Оценивается взаимосвязь курса национальной валюты и инфляции со ставкой рефинансирования, нормой резервирования, уровнем монетизации, платежным и торговым балансами. Для формирования лучшего сценария развития экономики страны необходимо относительно денежно-кредитных индикаторов вести согласованную денежно-кредитную политику.

**Ключевые слова:** инфляция, курс национальной валюты, ставка рефинансирования, уровень монетизации, торговый баланс.

## THE INTERACTION OF INFLATION AND THE EXCHANGE RATE IN THE REPUBLIC OF ARMENIA

**ASHOT AGHASI TAVADYAN,** Doctor of Sciences (Economics), Professor

Head, Chair of Mathematical Methods in Economics

Armenian State University of Economics

Chief Research Associate, M. Kotaryan Institute of Economics

National Academy of Sciences, Republic of Armenia

### Abstract

The article highlights the leading role of key indicators of the monetary policy. The relationship between the exchange rate of the national currency and inflation with the refinancing rate, the reserve ratio, the level of monetization, payment and trade balances is estimated. For the formation of a better scenario for the development of the country's economy, it is necessary to pursue a coordinated monetary policy with respect to the monetary indicators.

**Keywords:** Inflation, national currency rate, refinancing rate, monetization level, trade balance